


անկէ քիչ մ'ետքը տպուած մէկ տոմարին կամ խրատագրքին մէջ, որ նոյնպէս Վիեննայի Մխիթարեան Մատենադարանն է եւ Կերլայի Տաղարանին տպարանէն ելած է, (— Թոխաթեցւոյն Վենետիկ գրոշման Սաղմոսը չենք տեսած —) քնչպէս նաեւ 1584ին Հռոմ տպուած Հայերէն ու լատիներէն տումարին մէջ: Ետքիններուն գիրը Համեմատութեամբ աւելի կանոնաւոր շինուած, փոքր եւ կարգաւորեալ են, ուր որ ասիկայ յոռի գրչագրի կամ ընդօրինակողի մը գրուածքին կը նմանի:


Արդ 1512ին տպուած սոյն մատենան ուրուն եւ ո՞ր տպարանի հրատարակութիւնն է:

Վերը պատկերահանից եւ գործատանց օրինակն յիշատակեցինք: Այսպէս են ի մէջ այլոց Մայսէնի, Սէվրի, Վիեննայի եւ այլն յախճապակւոյ գործատներն եւ այլն, որոնցմէ շատք եւս իրենց այլարանական նշանը կ'ունենան: Այսպիսի նշաններ ունէին եւ ունին տպարաններն ալ, որ որչափ կ'երեւայ, կրկին էր: Ի սկզբան անգ տպագրութեան տպարանին կամ տպագրչին անունը յայտնի չէր գրոշմուեր գրքին վրայ, այլ տպագրապետին անուան սկզբնագրերը կը գրոշմուէին այլարանական ձեւի կամ պատկերի մը մէջ, որ այլեւայլ տեսակ էր: Ետքէն կամայ կամայ նոյն տպագրապետին կամ տպարանին տիրոջը կամ նոյն իսկ տպարանին անունը կը գրուէր մատենին յիշատակարանին մէջ, որ հետզհետէ զանազան փոփոխութիւններէ անցնելով՝ ճակտին վրայ փոխադրուեցաւ, որ սովորութիւնը մնաց մինչեւ ցայսօր:

Այսպիսի վաղեմի ձեւ կամ նշանագրոշմ մ'ունի մեր մատենան ալ: Այս նշանագրոշմը, գրքին վերջին էջին վրայ կարմիր թանաքով տպուած է, եւ յաջորդ ձեւն ունի: Քառակուսի տախտակի մը վրայ կեցած է հռոմէական խաչ մը բոլորակի կամ անուռի մը մէջ հաստատուած: Բոլորակը չորս հաւասար մասի բաժնուած է եւ ամէն մէկ մասն ունի իւր մէջը յաջորդ լատիներէն տառերը D. I. Z. A. Աս գրերը յայտնապէս կը ցուցնեն, նախ թէ մատենանը Եւրոպա տպուած է, երկրորդ՝ թէ տպագրապետին կամ տպարանին տիրոջ անուան առաջին գրերն ասոնք են:



Բայց արուեստը՝ զասոնք առեղծուլ, գտնել ու կարգալն է: Փրեդ. Ռօդչէլգէր գիտնական գերմանացին, Նիւռնպէրկի մէջ 1730ին, մինչեւ իւր ժամանակը տպուած մատենից այս նշանագրոշմներն ու մենագիրները (monogrammes) փնտռած, ժողոված ու հրատարակած է¹: Երեւելի գիտնականս քսան տարի աշխատելով՝ քովէ քով բերած է այսպիսի 500 նշանագրոշմ, Եւրոպայի զանազան երկիրներուն եւ քաղաքաց մէջ 1470էն մինչեւ 1730 տպուած գրքերուն մէջէն: Բայց գժբախտութեամբ, կամ բարեբախտութեամբ ըսենք, — վասն զի ասով աւելի մեծ յարգ կը ստանայ մեր գիրքը, — մեծաւ մասամբ Մոզուսիա, Նիւռնպէրկ, Սդրասպուրկ, Մարսէլլ, Հռոմ, Լանդերտամ, Բարիզ, Լոնտոն, Վենետիկ, Բիզա եւ ուրիշ քաղաքներն այս միջոցին տպուած մատենից մէջ այս մեր նշանը չկայ, եւ ոչ ալ ասոր շատ նման գրոշմ մը կը գտնենք, եթէ ոչ յաջորդն, որ ունի ստու-



գիւ ընդհանուր նմանութեան հետք մը մերինին հետ. բայց եթէ միտ դնենք՝ անմիջապէս կը գտնենք ասոր ու մերինին մեծ տարբերութիւնը: 1. Ասիկայ սեւ յատակի վրայ սպիտակ գրոշմուած է: 2. Կրկնախաչ է եւ կէս բոլորակին մէջ միայն երկու գիր կայ, այսինքն Z. T. (Cetero Taquino): 3. Բոլորակը կրկնագիծ է եւ երեքի բաժնուած, մինչդեռ մեր գրքին նշանագրոշմը սպիտակ յատակի վրայ կարմիր գրոշմուած է, միախաչ, չըջանակը միագիծ եւ չորս հաւասար մասի բաժնուած՝ ամէն մէկ մասը կը

¹ Սոյն հրատարակութեան անունն է. Thesaurus symbolorum ac emblematum, i. e. Insignia Bibliopolarum et typographorum ab incunabilis typographiae ad nostra usque tempora cum indice duplici, uno bibliopolarum et typographorum, altero urbium et locorum.